ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանի ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N10-Ա որոշման N2 հավելվածի «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններ» գլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

4	**Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններ**				
4,1	**Աջափնյակի և Դավթաշենի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին**				
1	բաժնի պետ	1	127000		127000
2	առաջին կարգի մասնագետ	4	59524		238096

	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**			**365096**
4,2	**Ավանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին**				
1	բաժնի պետ	1	134000		134000
2	առաջին կարգի մասնագետ	1	97000		97000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**2**			**231000**
4,3	**Արաբկիրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին**				
	բաժնի պետ	1	114000		114000
1	առաջին կարգի մասնագետ	1	61000		61000
2	առաջին կարգի մասնագետ	3	59524		178572
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**			**353572**
4,4	**Էրեբունու և Նուբարաշենի քաղաքացիական կացության գրանցման տարածքային բաժին**				
1	բաժնի պետ	1	110000		110000
2	առաջին կարգի մասնագետ	4	59524		238096
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**			**348096**
4,5	**Կենտրոնի և Նորք-Մարաշի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին**				
1	բաժնի պետ	1	120000		120000
2	առաջին կարգի մասնագետ	4	62000		248000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**			**368000**
4,6	**Մալաթիա-Սեբաստիայի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին**				
1	բաժնի պետ	1	120000		120000
2	առաջին կարգի մասնագետ	1	59524		59524
3	առաջին կարգի մասնագետ	1	59524		59524
4	առաջին կարգի մասնագետ	1	59524		59524
5	առաջին կարգի մասնագետ	1	59524		59524
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**			**358096**
4,7	**Նոր Նորքի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին**				
1	բաժնի պետ	1	114000		114000
2	առաջին կարգի մասնագետ	4	62000		248000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**			**362000**

4,8	**Շենգավիթի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին**				
1	բաժնի պետ	1	129000		129000
2	առաջին կարգի մասնագետ	4	59524		238096
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**			**367096**
4,9	**Քանաքեռ-Զեյթունի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին**				
1	բաժնի պետ	1	91000		91000
2	առաջին կարգի մասնագետ	2	59524		119048
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3**			**210048**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ՔԿԱԳՏԲ	**40**			**2963004**

2. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «271948000» թիվը փոխարինել «272097004» թվով, իսկ «Ամբողջը» տողում «363579000» թիվը՝ «363728004» թվով:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2013 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է 2013 թվականի հուլիսի 1-ից «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի փոփոխության կիրառմամբ։

Գործող հաստիքացուցակի համաձայն ամսական աշխատավարձի ֆոնդը կազմում է 363579000 դրամ, իսկ առաջարկվող նախագծով ամսական աշխատավարձի ֆոնդը կկազմի 363728004 դրամ, տարբերությունը կազմում է 149004 դրամ (6 ամսվա կտրվածքով կազմում է 894.0 հազ. դրամ), որը «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի փոփոխության արդյունքում լրացուցիչ ամսական պահանջվող գումարն է։

ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեում փոփոխություններ ու վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N1616-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» N661-Ն որոշմամբ նվազագույն աշխատավարձի բարձրացման արդյունքում լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 894.0 հազ. դրամ փոխհատուցում, որը կարտացոլվի Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեի փոփոխության համապատասխան նախագծում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման արդյունքում անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեի մասին» N558-Ն որոշման մեջ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2013 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի գծով նախատեսվում է համապատասխանաբար 894.0 հազ. դրամի ավելացում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ